ՀՀ Գեղարքունիքի մարզի տնտեսական զարգացման տեսլական և ռազմավարական ուղղություններ

Տեսլական՝ *ՀՀ Գեղարքունիքի մարզը և մասնավորապես Սևանի ափամերձ տարածքները վերածել ապրելու, հանգստանալու և գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ տարածաշրջան:*

Ակնհայտ է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի համեմատական առավելությունը Հայաստանի Հանրապետության մյուս մարզերի և տարածաշրջանների համեմատությամբ՝ Սևանա լիճն է իր անկրկնելի զբոսաշրջային գրավչությամբ ու ջրային ռեսուրսների տնտեսական ներուժով: Ուստի, տրամաբանական է, որ մարզի և տարածաշրջանի զարգացման առանցքը պետք է կազմի հենց Սևանա լճի ռեսուրսների արդյունավետ և կայուն օգտագործումը: Սևանա լճի տնտեսական ներուժի և ընձեռնած հնարավորությունների օգտագործումը պետք է ներառվի ՀՀ Գեղարքունիքի մարզի համար մշակված գործառնական ծրագրերի մեջ: Ափամերձ համայնքները պետք է նույնպես իրենց համայնքների հնգամյա զարգացման ծրագրերում ներառեն Սևանա լճի ընձեռնած հնարավորությունները: Համեմատության համար նշենք, որ միայն Շորժա (Սևանա լճի ափամերձ տարածքում հանգստի գոտու կառուցում) և Ծովագյուղ (Հանրային լողափի կառուցում) համայնքներն են Սևանա լճի ընձեռնած հնարավորությունների օգտագործումը ներառել իրենց 2017-2021թթ. զարգացման ծրագրերում:

Զարգացման ուղղություններ:

Սևանի տարածաշրջանի զարգացումը պետք է ընթանա մի քանի հիմնական ուղղություններով՝

1. Հանգիստ և զբոսաշրջություն,
2. Տրանսպորտ և ենթակառուցվածքներ,
3. Աղբահանություն և սանիտարական մաքրում,
4. Բարձրարժեք գյուղատնտեսություն,
5. Ոչ գյուղատնտեսական արդյունաբերություն,
6. Քաղաքաշինություն:

Զարգացման ուղղությունները պետք է լինեն փոխշաղկապված և փոխադարձաբար լրացնող: Օրինակ՝ զբոսաշրջության աճը կմեծացնի բնամթերքի նկատմամբ պահանջարկը, ինչն էլ, իր հերթին, կխթանի գյուղատնտեսությունը: Խիստ քաղաքաշինական նորմերի պահպանումն ու ենթակառուցվածքների զարգացումը կբերի զբոսաշրջության աճին: Բնապահպանական միջոցառումները (Սևանա լճի ջրի, օդի և ափամերձ տարածքի պահպանում) կմեծացնեն տարածաշրջանի գրավչությունը զբոսաշրջիկների համար և այլն: Զբոսաշրջային արդյունաբերության ստանդարտներով 100 մարդ/գիշերը ստեղծում է 1-2 աշխատատեղ:

Ստորև ներկայացված աղյուսակն ուրվագծում է Սևանի ափամերձ տարածքի զարգացման հիմնական ուղղություններն ու հնարավոր ծրագրերը:

Ռազմավարական ուղղություն	Ռազմավարական նպատակ	Միջոցառման նկարագրություն
Զբոսաշրջություն	Մշակել զբոսաշրջային արդյունք և ստեղծել անհրաժեշտ ենթակառուցվածք՝ նվազեցնելով Սևանի ափամերձ տարածքի զբոսաշրջության սեզոնայնությունը, որը կմեծացնի Սևանի ափամերձ տարածք կատարվող զբոսաշրջային այցերի թվաքանակը (հաշվարկված մարդ/օրով): Այցերի քանակը կարելի ավելացնել մեծացնելով այցելուների թիվը և երկարաձգելով այցելությունների տևողությունը:	**1. Սևան քաղաքի ափամերձ հատվածի մերձակա տարածքում նոր համայնքի կառուցում (պայմանական անվանում՝ «Սպիտակ քաղաք»):** Սևանի քաղաքի ափամերձ հատվածի մերձակա տարածքում մասնավոր ներդրողների կողմից նախատեսվում է կառուցել նոր համայնք: Նոր համայնքը կառուցվելու է խիստ որոշակի քաղաքաշինական նորմերի պահպանմամբ և իր ճարտարապետությամբ նման է լինելու Միջերկրածովային մերձափնյա քաղաքներին՝ ափամերձ պրոմենադով, ցածրահարկ շենքերով, հյուրանոցներով, սրճարաններով, զվարճանքի վայրերով (կինոթատրոն, պարահրապարակ և այլն) և հուշանվերների խանութներով: Ակնկալվում է, որ նոր քաղաքը կգրավի թե՛ արտասահմանցի, թե հայաստանցի զբոսաշրջիկներին իր նոր մոտեցմամբ և առաջարկվող ծառայություններով: Բնակարանները և առանձնատները կարող են հետաքրքրել թե՛ որպես հիմնական բնակարան, թե որպես ամառանոց: Տարբեր կարգի, տեսակի և հարմարավետ հյուրանոցային տնտեսության օբյեկտների առկայությունը հնարավորություն կտա թիրախավորել զբոսաշրջային շուկաները, ինչպես նաև զգալիորեն ավելացնել ներքին և ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը:

		2. Սևանի արևելյան և հարավային ափերին հանգստյան գոտիների, հանգստյան տների հիմնում: Սևան այցելող զբոսաշրջիկների ու այցելուների բացարձակ մեծամասնությունն այցելում է Սևանի հյուսիս-արևմտյան ափ (մասնավորապես՝ Սևանա թերակղզի և մերձակա լողափեր), որտեղ կենտրոնացած է հանգստյան տների, հյուրանոցների, հանրային սննդի օբյեկտների մեծամասնությունը: Չնայած որ, Մեծ Սևանի բնակլիմայական պայմաններն առավել նպաստավոր են ջրային հանգստի համար, Երևանից համեմատաբար մեծ հեռավորության պատճառով լճի հարավային և արևելյան ափերում զբոսաշրջային ենթակառուցվածքները բացակայում են: Մինչդեռ Ծափաթաղում գտնվող Թուֆենկյան հյուրանոցի առկայությունն ապացուցում է, որ բարձրակարգ առաջարկի դեպքում հնարավոր է ապահովել զբոսաշրջիկներ ու հանգստացողների այցելություն նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի հեռավոր համայնքներ: Երևանից որոշակի հեռավորությունը և համապատասխան ենթակառուցվածքի առկայությունը հնարավորություն կտա վերակենդանացնել «հանգստյան տների» ավանդույթը և վիքենդյան հանգստի փոխարեն կազմակերպել 1-2 շաբաթ տևողությամբ լիարժեք հանգիստ:

Նկար 1. Տեսարան Սևանի արևելյան ափից, Դարանակ գյուղի մերձակայքում

3. Բյուջետայի հանգստյան տների կառուցում

Սևանի ափամերձ տարածքներում գործում են շուրջ երկու տասնյակ հյուրանոցներ (հանգստյան տներ): Հյուրանոցները կարելի է բաժանել 2 խմբի՝ նորակառույց բարձրարժեք և նախկին ԽՍՀՄ ժամանակներում կառուցված և ժամանակակից հարմարություններից զուրկ: Առաջին տիպի հյուրանոցները (Ավան Մարակ Ծափաթաղ, Ծովասար, Հարսնաքար, Բեսթ Վեսթերն Բոհեմիան Ռեզորթ և այլն), մեծամասամբ, մատչելի չեն ներքին զբոսաշրջության համար: Գիշերավարձը մեկ սենյակի համար սկսում է 25.000 ՀՀ

		դրամից և ներառում է միայն նախաճաշ: 12 օրվա հանգստի համար վճարը կկազմի 300.000 ՀՀ դրամ: Հաշվի առնելով, որ հյուրանոցների շրջակայքում, որպես կանոն, ռեստորաններից բացի հանրային սննդի այլ մատչելի տարբերակներ չկան, 12 օրվա հանգստի գումարը կարող է հասնել 500.000 ՀՀ դրամի: 2-րդ տիպի հանգստյան տներում հարմարությունները խիստ անբավարար են և չեն կարող բավարարել որ միայն արտասահմանցի, այլև հայաստանցի զբոսաշրջիկների կարիքները: Հետևաբար, Սևանա լճի ափին մասսայական հանգստի մշակույթը վերակենդանացնելու համար անհրաժեշտ է խրախուսել բյուջետային հյուրանոցների (3 աստղ դասի) կառուցումը՝ նմանավանդ լճի արևելյան և հարավային ափերին: **4. Առողջարանի կառուցում** Սևանա լճի առափնյա Լիճք համայնքը հայտնի է իր բուժիչ հանքային ջրերով: Լիճք համայնքում հանգստյան տան կառուցումը հնարավորություն կտա առավել երկար ժամանակով զբոսաշրջիկների և առողջարանային բուժում ստացողների հրապուրել իրենց հանգիստն ու բուժումն անցկացնել Սևանի ափին: Այս պարագայում սեզոնայնությունը մղվում է երկրորդ պլան, քանի որ այցելությունների հիմնական նպատակը բուժում ստանալն է, այլ ոչ թե լճում լողալը կամ լողափին հանգստանալը:

		5. Սպորտային և էքստրեմալ զբոսաշրջություն Սևանում հնարավոր է զարգացնել սպորտային և էքստրեմալ զբոսաշրջությունը, ներառյալ ջրային և ոչ ջրային սպորտաձևերը: Ջրային սպորտաձևերից կարելի է առանձնացնել առագաստային սպորտը, թիավարությունը և դայվինգը: Ոչ ջրային սպորտաձևերի ընտրությունն ավելի մեծ է՝ վազքից և հեծանվավազքից մինչև պարագլայդինգ, ալպինիզմ և ձիասպորտ: Հաշվի առնելով Սևանա լճի շրջակայքի ռելիեֆը և եղանակային պայմանները, տարածաշրջանում հնարավոր է զարգացնել դահուկային սպորտը (լեռնային և դահուկավազք): Ձմեռային հանգիստն առավել հրապուրիչ դարձնելու համար կարելի է կազմակերպել սիրողական բիատլոնի մրցումներ, որը կհրապուրի ոչ միայն դահուկավազքի, այլև հրաձգության սիրահարներին: Սպորտային տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ կլինի ստեղծել համապատասխան ենթակառուցվածքներ՝ սպորտային բազաներ, դահուկային վազուղիներ, ճոպանուղի և այլն: **Նկար 2. «Սևանի վայրենին» կայքէջ (http://savageofsevan.com/)**

6. Սիրողական ձկնորսության թռչունների դիտման կազմակերպում

Որպես այլընտրանքային զբոսաշրջություն կարելի է դիտարկել նաև Սևանում սիրողական ձկնորսության կազմակերպումը և թռչունների դիտումը (bird watching), մանավանդ հաշվի առնելով այդ երկու ուղղությունների կայուն աճի միտումները համաշխարհային մակարդակով: Մանավանդ ձկնորսական շրջագայություններից ստացված եկամուտը կարելի է ուղղել Սևանում ձկնաբուծության զարգացմանը: Անհրաժեշտ է Սևանի ափամերձ տարածքում առանձնացնել որոշակի հատվածներ, հարմարեցնել/կահավորել կարթով սիրողական ձկնորսության համար, վաճառել կամ վարձակալությամբ հանձնել ձկնորսական պարագաներ, ստեղծել սիրող ձկնորսների համար հրապուրիչ միջավայր:

7. Քաղաքային զբոսաշրջության զարգացում

		Բացի սույն բաժնի առաջին կետում նշված «Սպիտակ քաղաքից», անհրաժեշտ է զարգացնել նաև ներկա և պոտենցիալ զբոսաշրջային կետերի և հյուրանոցների/հանգստյան տների մոտակայքում գտնվող համայնքներում ստեղծել քաղաքային զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, որպեսզի այն զբոսաշրջիկները, ովքեր չեն ցանկանում երեկոները մնալ հյուրանոցների տարածքում, երեկոն հաճելի անցկացնելու այլ հնարավորություն ունենան: Մասնավորապես, անհրաժեշտ է քաղաքներում կինոթատրոններ, պարահրապարակներ, բարձր սպասարկման որակ ունեցող և ազգային ճաշացանկ մատուցող ռեստորանների և սրճարաններ կառուցել: **8. Հանրային լողափերի կառուցում և/կամ կահավորում** Սևանի ափամերձ տարածքում կամ ընդհանրապես չկան, կամ կան ընդամենը հատ ու կենտ հանրային լողափեր, որոնք գրավիչ կարող են լինել հայաստանցի և օտարերկրյա զբոսաշրջիկների համար: Անհրաժեշտ է հատկորոշել հանրային լողափերը, դրանց շահագործման համար նվազագույն չափանիշներ սահմանել, խստորեն վերահսկել շահագործման պայմանների պահպանումը: Հանրային լողափ մուտքը պետք է լինի անվճար: Վճար կարող է գանձվել միայն որոշակի ծառայությունների դիմաց, օրինակ՝ մեքենաների ավտոկանգառի կազմակերպում կամ հովանոցների վարձակալություն:
Տրանսպորտ և ենթակառուցվածք	Սևանի տարածաշրջանում ստեղծել ենթակառուցվածքային և տրանսպորտային ցանց,	**1. Հրազդան – Վարդենիս ուղևորատար գնացքի շահագործման իրագործելիության ուսումնասիրություն** Սևանի արևելյան ափի երկաթգծի վերագործարկումը, Սևանա

	նպաստելով դեպի Սևան զբոսաշրջության աճին, ուղևորա և բեռնափոխադրումների ծավալների մեծացմանը:	լճի ափին զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման հետ համատեղ, հնարավորություն կտա մեծացնել զբոսաշրջիկների հոսքը դեպի Շորժա – Ծափաթաղ – Վարդենիս հատված: Ժամանակակից էլեկտրագնացքը կսպասարկի ոչ միայն զբոսաշրջիկներին այլ տեղի բնակչությանը՝ էապես կրճատելով մինչև Երևան հասանելիության ժամանակնու ծախսերը: **Նկար 3. Շորժայի կայարանի լքված շենքը** **2. Լաստանավային հաղորդակցության կազմակերպման իրագործելիության ուսումնասիրություն** Լաստանավը, որը կարող է կապել Սևանի ափամերձ հիմնական բնակավայրերը և զբոսաշրջային կենտրոնները (ք.

		Սևան («Սպիտակ քաղաք»), Սևանի թ.-կղզի, ք. Մարտունի, գ. Շորժա, Արտանիշի ծոց (պորտ Այաս), Կարճաղբյուր, Նորատուս): Լաստանավը կարող է հրապուրիչ լինել թե՛ զբոսաշրջիկներին, թե՛ տեղի բնակիչներին՝ հանդիսանալով երթուղային տաքսիներին ավելի հարմարավետ, մաքուր և էժան տարբերակ:
Աղբահանություն և սանիտարական մաքրում	Ապահովել Սևանի տարածաշրջանի կոշտ կենցաղային թափոնների կառավարման արդյունավետ գործունեությունը, մաքրել լճի ափամերձ տարածքը աղբանոցներից ու անկանոն թափված աղբից, պարբերաբար լիճը և լողափերը մաքրել այնտեղ թափվող աղբից: Կոտայք – Գեղարքունիքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի ներդրումը կարող է արմատապես լուծել մարզում աղբահանության և աղբի մեկուսացման խնդիրը, սակայն մինչև համակարգի վերջնական կայացումն անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել Սևանա լճի	**1. Սևանա լճի ափերին գոյացած ճահճային շերտի մաքրում** Սևանա լճի ափամերձ ճահճային շերտում կուտակված է կենցաղային աղբի հսկայական ծավալ: Աղբը ոչ միայն վնասում է լճի էկոլոգիային, այլև վանում է զբոսաշրջիկներին ու հանգստացողներին, էապես նվազեցնում է լճի զբոսաշրջային պոտենցիալը, անօգտագործելի է դարձնում լողափերը: Անհրաժեշտ է պետության, համայնքների, մարզի ձեռնարկությունների, տուրիստական գործակալությունների ու քաղ. հասարակության ջանքերով մաքրել ափամերձ հատվածներում կուտակված աղբը: **Նկար 4. Արտանիշի ծոցը, «Պորտ Այաս» լողափ**

	մերձակայքում և ափամերձ տարածքներում, ափերին կուտակված աղբը մաքրելու և աղբի կուտակումները կանխելու ուղղությամբ:	 **Նկար 5. Ափամերձ հատված, Վարդենիս** **2. Սևանի ափամերձ հատվածների մաքրում կենցաղային աղբից** Սևանի ափամերձ հատվածները, հավանաբար, հանրապետության ամենաղտոտված մասերից են: Մշտական քամիները և ափի երկայնքով աճող թփերը բերում են նրան,

		որ աղբը կուտակվում է թփերի փշերին ստեղծելով բավականին անհրապույր տեսարան հենց Սևանի ափին: **Նկար 5. Կենցաղային աղբըափամերձ չիչխանի թփերին** Սևանի ափամերձ անտառները ծառայում են որպես աղբանոցներ: **Նկար 6. Աղբը լճի մերձակա անտառային հատվածում, Մարտունի** **3. Սևանա լճի շրջակայքում պատմական և զբոսաշրջային այլ արժեք ներկայացնող հուշարձաններին հարող տարածքների մաքրում**

		Սևանի տարածաշրջանը հարուստ է պատմամշակութային և հոգևոր արժեքներով: Հաշվի առնելով կրոնական զբոսաշրջության ծավալների աճը և Հայաստանի ակնհայտ մրցակցային առավելություններն այլ երկրների հանդեպ, անհետաձգելի հրամայական է մաքրել Սևանի տարածաշրջանում գտնվող պատմական հուշարձանների տարածքները և դրանց շուրջ ձևավորել անհրաժեշտ զբոսաշրջային ենթակառուցվածք, օրինակ՝ զուգարաններ: Ցավոք, հուշարձանների զգալի մասն այսօր գտնվում է աղբի մեջ: **Նկար 7. Աղբը Հայրավանքի տարածքում** 
Բարձրարժեք գյուղատնտեսություն	Սևանի տարածաշրջանում խրախուսել բարձրարժեք	**1. Սևանի տարածաշրջանում բարձրարժեք գյուղատնտեսական մշակաբույսերի մշակում և**

	գյուղատնտեսության և գյուղատնտեսական ապրանքների վերամշակումը: Զբոսաշրջիկների հոսքի ակնկալվող աճն իր հետ կբերի գյուղատնտեսական մթերքների պահանջարկի աճին, հաշվի առնելով, որ ճիշտ մարկետինգային քաղաքականություն իրականացնելու դեպքում, զբոսաշրջիկները կնախընտրեն տեղական արտադրության «տնական մթերքներ» այլ ոչ թե սուպերմարկետներում վաճառվող փաթեթավորված կաթը, մածունը, կարագը և կասկածելի ծագմամբ մեղրը: Սևանի ավազանի գյուղատնտեսության մեջ իր ուրույն տեղն ունեն Սևանա լճի ձկնային և խեցգետնային պաշարները:	**վերամշակում:** Սևանի տարածաշրջանում մշակվող բույսերի մեջ էական տեղ են զբաղեցնում հացահատիկային կուլտուրաները՝ ցորենն ու գարին: Սակայն ցորենից ու գարուց ստացվող եկամուտները բավարար չեն հողը մշակողների կարիքները բավարարելու համար: Անհրաժեշտ է խախուսել և պետականորեն աջակցել կտավատի ու հնդկացորենի մշակմանը: Հաշվի առնելով Հայաստանում արտադրվող հնդկածավարի ու Հայաստան ներկրվող հնդկածավարի ծավալները հստակ է, որ առկա է ներկրման փոխարինման պոտենցիալ: **2. Վայրեաճ բույսերի վերամշակում** Մասնավորապես խոսքը գնում է ՀՀ Գեղարքունիքի մարզում աճող չիչխանի մասին: Չիչխանը օգտակար նյութերի գանձարան է, որը հարուստ է վիտամիններով և միկրոտարրերով: Չիչխանն օգտակար է նյութափոխանակության կարգավորման եւ արյան շրջանառության համար, կարգավորում է նյարդային համակարգի աշխատանքը, թուլացնում է տոքսիկ նյութերի, ռենտգենյան ճառագայթների, սթրեսի ազդեցությունը: Պտուղներից եւ սերմերից պատրաստված յուղը նպաստում է կիրառվում է 12-մատնյա աղիի եւ ստամոքսի խոցի բուժման դեպքում: Էական է նաև չիչխանի կիրառումն օծանելիքի (պարֆյումերիայի) արտադրությունում:

Անհրաժեշտ է խարխուսել և պետականորեն աջակցել վայրեաճ չիչխանի վերամշակմանը, որպես սպառման թիրախային շուկաներից մեկը դիտարկելով Սևան այցելած զբոսաշրջիկներին:

Նկար 8. Չիչխանի թուփը

3. Մեղրի արտադրություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջաններում զգալի քանակով տնային տնտեսություններ զբաղվում են մեղվապահությամբ ու մեղրի արտադրությամբ: Սակայն, կան դժվարություններ վաճառքի հետ կապված: Վաճառքը հիմնականում կատարվում է տներից՝ ծանոթներին և «մշտական հաճախորդներին»: Մյուս կողմից, արտադրողների հետ ուղղակի կապ չունեցող սպառողների համար դժվար է անարատ մեղր գտնել, քանի որ շուկայում, հիմնականում, վաճառվում է կեղծված և կասկածելի որակի մեղր: Անհրաժեշտ է օգնել մեղր արտադրողներին

		կազմակերպվել և նրանց օժանդակել շուկա դուրս գալու: Մեղրը կարող է արտահանվել, վաճառվել Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես Սևան այցելած զբոսաշրջիկներին: **4. Ջերմոցների հիմնում** Մի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի սառը կլիման, իսկ մյուս կողմից արևային օրերի մեծ քանակը բարենպաստ պայմաններ են ստեղծում մարզում ջերմոցային տնտեսությունների ստեղծման համար: Ավանդական բանջարեղենի աճեցումից բացի պետք է խարխուսել բարձրարժեք բանջարեղենի ջերմոցային մշակումը, մասանավորապես ծնեբեկ և բրոկոլի: **5. Կաթի վերամշակման ձեռնարկությունների հիմնում** ՀՀ Գեղարքունիքի մարզի կլիման և լանդշաֆտը նպաստում են անասնապահության զարգացմանը: Արդյունքում, խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը ՀՀ Գեղարքունիքի մարզում ամենամեծերից մեկն է Հայաստանի Հանրապետությունում: Սակայն անասնապահները չեն կարողանում լիարժեք եկամուտ ստանալ անասնապահությունից, քանի որ բավարար չեն կաթի մթերման կարողություններն ու կաթի վերամշակման արտադրամասերն, ինչպես նաև սպանդանոցներն ու մսի վերամշակման գործարանները: Մարզում

		անասնապահությունը խթանելու համար անհրաժեշտ է աջակցություն ցուցաբերել կաթի և մսի վերամշակման գործարաններին արտադրամասերին: **6. Ձկնարդյունաբերության զարգացում** Հայաստանի Հանրապետությունում արդյունագործական ձկնորսության գերակշիռ մասն իրականացվում է Սևանա լճում: Մինչև լճի մակարդակի իջնելը հիմնական որսատեսակներն էին Սևանի իշխանը, Սևանի կողակը, մակարդակի իջեցումից հետո՝ սիգը: Վերջին տասնամյակներում շարունակվում է արդյունագործական ձկների քանակական ցուցանիշների նվազման միտումը: Սևանա լճի արդյունագործական ձկնատեսակները լուրջ փոփոխություններ են կրել: Հիմնական արդյունագործական ձկան՝ սիգի, պաշարները դեռևս հեռու են արդյունագործական ծավալներից: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել և աջակցել Սևանա լճում իշխանի և կողակի ծավալների և սիգի արդյունագործական ծավալների աճի ուղղությամբ:
Ոչ գյուղատնտեսական արդյունաբերություն	Սևանի տարածաշրջանում զարգացնել ոչ գյուղատնտեսական արդյունաբերությունը և տնայնագործությունը	**1. Գորգագործության վերականգնում** ՀՀ Գեղարքունիքի մարզում մինչև 2000-ականների սկզբները գործում էր Թուֆենկյան գորգերի գործարանը: Գործարանն աշխատանքով էր ապահովում հարյուրավոր անձանց:

		Սակայն, դրամի էական արժևորումը շուրջ 580 դրամից մինչև 300 դրամ հայկական գորգերը միջազգային շուկայում դարձրեց ոչ մրցունակ և գորգերի արտադրությունը՝ ոչ շահութաբեր: Այժմ, երբ ամերիկյան դոլարի փոխարժեքը տատանվում է 480-485 դրամի սահմաններում, իրական հնարավորություններ կան վերականգնել գորգագործությունը և վերադառնալ միջազգային շուկա: **Նկար 9. Թուֆենկյան կարպետի ցուցասրահ**
Քաղաքաշինություն	Սահմանել Սևանի տարածաշրջանի քաղաքաշինական նորմերը, պահպանելով ազգային ճարտարապետության ավանդույթները: Սևանա լճի ափին և մերձակայքում	**1. Քաղաքաշինական նորմերի սահմանում** Ազգային պարկի տարածքում կառուցվող շենք-շինությունները, հյուրանոցները, հանրային սննդի օբյեկտները ափամերձ հատվածներում կառուցվող ոչ հիմնական շինությունները պետք է կառուցվեն խիստ որոշակի քաղաքաշինական նորմերի պահպանմամբ: Ուստի, անհրաժեշտ Սևան ազգային պարկի համար սահմանել

	կառուցված շինությունները պետք է լրացնեն լճի բնական գեղեցկությունը, այլ ոչ թե փչացնեն բնապատկերը:	քաղաքաշինական նորմեր և խստորեն հետևել դրանց պահպանմանը: Բացի ոճի պահպանումից պարտադիր պայման պետք է լինի, որ որևէ շինություն չծածկի որևէ պատմական հուշարձանի տեսադաշտը, խոչընդոտի դեպի հուշարձան հասանելիությունը կամ լինի պատմական հուշարձանի հետ ոչ համահունչ: **Նկար 10. «Բաշինջաղյան» թեյարանը Սևանի ափին, գ. Նորաշեն** **2. Աջակցություն սեփական տները հյուրատների վերափոխմանը** Հյուրատները կարող են զբոսաշրջիկների հոսք ապահովել Սևանի տարածաշրջան: Անհրաժեշտ ֆինանսական (վարկային և դրամաշնորհային) և խորհրդատվական (ներառյալ դասընթացներ) աջակցություն ցուցաբերել այն տների սեփականատերերին:

		3. Կիսակառույց և կիսաքանդ շենքերի ապամոնտաժում կամ վերագործարկում Սևանի ափին բազմաթիվ են կիսակառույց կամ կիսաքանդ շենքերը և ժամանակավոր (ոչ հիմնական) շինությունները: Այդ շենքերը խաթարում են բնապատկերը և մռայլ տրամադրություն առաջացնում: Ժամանակավոր լքված շինությունները պետք է ապամոնտաժվեն, իսկ կիսաքանդ կամ կիսակառույց շենքերը պետք է կամ վերանորոգվեն և վերագործարկվեն, կամ՝ ապամոնտաժվեն: **Նկար 11. Լքված տաղավարներ, Շորժա** 

		Նկար 12. Կիսակառույց առանձնատներ, Սևանի հյուսիս արևելյան ափ **Նկար 13. Սևանի Մոթելի և Սևան 2 հանգստյան տան կիսաքանդ շենքերը**